

## ԱՏԱՓԱՉԱՐՑԻՆ

Աւանդութիւն մը կ'ըսէ, թէ Սրբուհի անուն մայրապետ մը յանկարծ կը սիրահարուի կրակապաշտ քուրմի մը ու կ'ամուսնանայ անոր հետ՝ ընդունելով հեթանոսութիւնը: Այդ միութենէն կը ծնի բարի ծաղիկ մը: Անիկա Ատափազարցին է: Մայրը կը դառնայ քրիստոնէութեան եւ իր զաւակը մկրտել կուտայ եօթը եկեղեցիներու մէջ՝ սպառելով ահագին ջուր, միւռոն եւ օղի: Կնքահայրը կ'ըլլայ, ըստ աւանդութեան միշտ, Տոն Քիշոթը:

Ու զաւակը, այսպիսով, կը քաշէ իր սրբուհի մօրը, ինչպէս իր հեթանոս հօրը կամ իր ծուռ ու մուռ կնքահօրը:

Բարի ու բարեպաշտ կ'ըլլայ Ատափազարցին եւ կը սկսի պաշտել Ս. Մարիամը ու առհասարակ բոլոր Մարիամները:

Իր սեփական տանը մէջ մատուռ կը շինէ ու կը ջանայ ուրիշին տանը մէջ ալ կանգնել մեհեան մը:

Ձեռներեց է ու միշտ հեւքի մէջ: Մէկու մը մէկ ըրածին ինք երկուքը կ'ընէ: Մէկ քաշելուն գիտէ երկու ակռայ հանել, մէկ նետելուն գիտէ երկու հոգիի կլլեցնել: Իր կեանքը համակ շարժում է, որով կը սիրէ բոլոր շարժուն բաները. օրինակ շարժանկարը, ինքնաշարժը ու երկրաշարժը:

Կը սիրէ նաեւ օղետունը, որ իրեն համար «ծով» մըն է յարաշարժ:

Գիտունները կրնան ստանալ յաւիտենական շարժումը՝ Ատափազարցիի մը կզակին մէջէն:

Ատափազարցիին առողջանութիւն ալ լի է շարժական ալիքներով: Երգահան եւ երգիչ է միանգամայն, քանի որ կը խօսի եղանակով: Իր կեանքը ամէն օր *օփերաքոմիք* մըն է՝ մերթ *օփերան* աւելի ու յաճախ *քոմիքը* շատ:

Ուսումնասեր է, ինչպէս նաեւ գրասեր: Կը նախընտրէ, սակայն, երգիծաբանութիւնը՝ իբրեւ գրական նիւթ: Երգիծաբանութիւնն ալ, փոխադարձաբար, կը սիրէ Ատափազարցին... իբրեւ հում նիւթ:

Որ երկրին մէջ ալ գտնուի, միջոցը կը գտնէ կարճ ժամանակի մէջ տեղացիներուն հետ մշակելու բարեկամութիւն: Օր մըն ալ կը